

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Գառնուկյանի
խանութում

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммаск“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղական ուսումնարանները, — Երբքին տե-
սուծիւն, նամակ խորհովից, նամակ խմբա-
գրին, Երբքին լուրեր: Արտաքին տեսու-
ծիւն: Այլուր: Աւստրիա: Յունաստան, Արտա-
քին լուրեր: «Մշակի» հեռագիրներ: Յայտա-
րարութիւններ: — Տեղեկացոյց: — Բանասիրա-
կան: Մի նկատողութիւն:

ԳԻՒԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱ- ՐԱՆՆԵՐ

Քանի գնում է մեր ուսումնա-
րանների թիւը, մեր այդպէս ա-
նուանված հոգեւոր դպրոցների
թիւը շատանում է հայաբնակ
քաղաքներում, մինչդեռ գիւղերում
նոր ուսումնարաններ չառն քիչ են
հիմնվում, իսկ եղածները պահվում
են նոյն նահապետական դրու-
թեան մէջ, ինչպէս եղել են մե-
զանից տաս տարուց առաջ:

«Մշակի» № 16-ի մէջ տպված
կար մի նամակ (հայանդուրից, որ-
տեղ պարզ ասված էր, որ ամբողջ
Ալեքսանդրապոլի գաւառի գիւ-
ղերում գրեթէ բոլորովին չը կան

ուսումնարաններ, իսկ եղածներն
էլ շատ անպիտան են պահվում:

Իացի այդ նամակից «Մշակի»
մէջ ամէն տեղեց այդպիսի նա-
մակագրութիւններ են տպվել և
վերջապէս մենք ինքներս անձամբ
ծանօթ ենք Ալեքսանդրապոլի,
Երևանի, Լճիմիսի, Հին-Նա-
խիջևանի բոլոր գիւղերի ուսում-
նարանների հետ և գիտենք որ
բոլորն էլ ամենաթշուառ, ողոր-
մելի դրութեան մէջ են: Գիտենք
այնպիսի ուսումնարաններ, որտեղ
երեխաները նստած են գետինն ու
սենեակում, որտեղ անասուններ
են կապած: Գիտենք այնպիսի ու-
սումնարաններ, որտեղ դասատուներ
կպած է միկիտանի խանութին և
երկու սենեակները՝ դասատուներ և
միկիտանի խանութը բաժանվում
են միմեանցից մի բարակ պատով,
իսկ բազը, այնտեղ ուր պէտք է
խաղան երեխաները բոլորովին չէ
բաժանված:

Մեղադրել գիւղացի ժողովուրդը

ցած ազգերի մէջ, և թէ, մասնաւորապէս, ոչոյն
գիւղութեան և արհեստի ողբալի դրութիւնը մեր
մէջ:

1873 թ. լոյս տեսաւ լայնցիզմով մեր «Հայ-
կական կանոնաւոր» վայելուչ գրութեան գա-
ղափարները (օրինակներ), իր սխառնութեան
կան, աստիճանաւոր վարժութիւններով, թա-
նայանքի օրինակներով և դանաղան պատկերնե-
րով, որ որ տառերի ամեն մի մասը զետեղված
են մեր աշխատասիրած առանձին տողաշարա-
ցանցի մէջ և ուր որ ցանցի ամեն մի մասը
ունի իր չափը:

Մեր առաջարկած գրութեան ձևը, նորա որոշ
և հիմնական կանոնների վրա հիմնված և ճիշտ
չափաւորված լինելը և տպագրութեան չքերու-
թիւնը խոտովանեցին զանազան մասնագէտներ
և, մասնաւորապէս, Ս. Պետրեբուրգեան համա-
լսարանի Արեւելեան լեզուների ֆակուլտետը, որի
քննողական դատողութիւնը վերոյիշեալ թէ կա-
նոնաւոր և վայելուչ գրութեան պատմութեան
և տեսութեան և թէ Հայկական կանոնաւոր և
վայելուչ գրութեան գաղափարների մասին տպե-
ցինք ուսմանը լրագիր «Кавказ» 1875 թ.
№ 7-ի մէջ և առանձին բրոշուրով, որը ձգի
բաժանվում է վերոյիշեալ գրքի գնողներին:

Պ. Տէր-Ղևոնդեանցի «Մայրենի լեզուի» այդ-
բանարանի երրորդ տպագրութեան մէջ, որը լոյս
տեսաւ 1874 թ., մենք տեսանք վերոյիշեալ լայն-
ցիզմ տպած Հայկական կանոնաւոր և վայելուչ
գրութեան օրինակներից օրինակած (2-դ. երեսից
այլբանարանի 7 երեսին) բաղադրիչ կամ սկզ-
բնական խաղերը: № 2 մեծութեան գրադիր
այլբանար (15 երեսից), մի և նոյն մեր յօդանամ
տողացանցով, և այլբանարանի 8-դ. երեսի մէջ
մի և նոյն տողացանցի մէջ տպած են մեր առա-
ջարկած գրութեան չափով և ձևով զանազան
բառեր:

Այս երրորդ տպագրութեան յառաջարանի
մէջ պ. Տէր-Ղևոնդեանցը յիշում է, թէ նա այս
տպագրութիւնը առաջարկում է «գրութեան
օրինակներով, ասում է թէ «Ուսուցիչը պէտք է
աշխատէ քանի մի շարքով նոյնպէս հետ բերանացի
կրթութեամբ պարսկի, գծագրել տալով այդ
միջոցին տառերի բաղադրիչ (մեզ մօտ սիլլաբի-
կան կոչված) գծերը և ապա այն օրինակ
ները, որոնք զետեղված են Մայրենի լեզուի
սկզբում, դարձնում է դպրոցացիների ուշա-
դրութիւնը այն հանգամանքի վրա, որ միջի
այլց, լցրեց այն քանակը, որ վերաբերում է
«մասնաւոր ապէս ու գրութեան օրինակ-
կան երով հրատարակելու»:

իր այդպիսի անտարբերութեան
համար դէպի ուսումնարանական
գործը անկարելի է, որովհետեւ գիւ-
ղացիք կամ անգիտակցաբար են
այդպէս վարվում, կամ իրանք ևս
ցանկանում են օրինաւոր ուսում-
նարան ունենալ, ցանկանում են
կրթել իրանց երեխաներին, բայց
չը կան այնպիսիք, որոնք նրանց
առաջնորդէին իրանց խելացի խոր-
հուրդներով: Գիւղացիների մեծ
մասը իսկապէս ոչ թէ միայն ան-
տարբեր չեն դէպի ուսումնարանը,
այլ ընդհակառակը նրանք կամե-
նում են կրթել իրանց երեխաներին,
կամենում են ուսումնարան ունե-
նալ, բայց չը գիտեն թէ ինչպէս
պէտք է գործեն և փոխանակ ունեն
չենելու, աչքն էլ են հանում:

Արդեօք ո՞վ պէտք է գիւղացի-
ներին քարոզէ, ո՞վ պէտք է նը-
րանց առաջնորդէ դէպի լոյս, ո՞վ
պէտք է համոզէ դրանց ուսում-
նարաններ ունենալ և վերջապէս
ո՞վ պէտք է հսկէ, որ ուսումնա-
կան կոչված) գծերը և ապա այն օրինակ
ները, որոնք զետեղված են Մայրենի լեզուի
սկզբում, դարձնում է դպրոցացիների ուշա-
դրութիւնը այն հանգամանքի վրա, որ միջի
այլց, լցրեց այն քանակը, որ վերաբերում է
«մասնաւոր ապէս ու գրութեան օրինակ-
կան երով հրատարակելու»:

Պ. Տէր-Ղևոնդեանցը ոչ մի խօսքով չէ յի-
շում, որ այդ օրինակները առած է մեր աշխա-
տութիւնից և առաջարկում է իբրեւ իր սեփա-
կան աշխատութիւն: Այսպիսի գործը անցկացաւ
մեր հանդիմանգրութեան առաջին առաջնի
իցէ քննութեան կամ նկատողութեան նրա կող-
մից:

Վերոյիշեալ այլբանարանի չորրորդ տպը
լոյս տեսաւ 1875 թ. և այս անգամ էլ պ. Տէր-
Ղևոնդեանը վարվել է մի և նոյն ձևով այսինքն
մեր գրութեան օրինակները առաջարկել է հա-
տարակութեան իբրեւ իր սեփական աշխատու-
թիւն:

Եւրոպայի 5-դ. տպագրութիւնը լոյս տեսաւ
1877 թ., առանց յառաջարանի, առանց պատ-
կերների, հետեւելով մեր առաջարկած գրութեան
օրինակներին, առանց բաղադրիչ խաղերի այլբա-
նարանի և տողաշարացանցի:

Նիթէ մենք միայն մեր մասնաւոր օգտի ետեւ
գնալիք: 1874 թ.ից մինչև այժմ բառականին ժա-
մանակամիջոց ունենել է մի և նոյն ձևով: Պ. Տէր-
Ղևոնդեանցի այսպիսի գործողութիւնը ցոյց տալ
բայց մենք ունենինք այլ հաշիւ ևս, այն է որ
մեր մէջ կանոնաւոր և վայելուչ գրութեան
դաստիարակութիւնը լինի որպէս գիտութիւն և ոչ
թէ որպէս մի կեղծ չարաբանք, որպէս մինչև
այժմ էլ լինում է շատ տեղ:

Այլ է սովորեցնել երեխային ձեռագիր տառը
կարդալը, այլ է գրութեան արհեստին և գիտու-
թեանը ընտելացնել այնպէս, որ վերջը մասնաւոր
սիրուն գրէ ոչ թէ միան ծանր, կամայ գրելիս,
այլ և արագ, շուտ գրելիս, ասել է թէ հա-
շիւ երեսն վայելուչ արագագրութեանը
ընտելացնելու: Այս պէտք է լինի գրութեան
ուսման առաջին նպատակը:

Պ. Տէր-Ղևոնդեանցի «Մայրենի լեզու» կոչված
այլբանարանի 3-դ. և 4-դ. տպագրութեան մէջ

րանը կանոնաւոր լինի, որ ուսու-
ցիչը փոքր ի շատե՛ զարգացած
մարդ լինի:

Այս բոլոր պարտականութիւն-
ները պէտք է կատարեն մեր թե-
մական տեսուչները:

Իայց կատարում են արդեօք
մեր թեմական տեսուչները իրանց
պարտաւորութիւնը, կամ աւելի
լաւ է ասել՝ ունեն արդեօք մեր
թեմական տեսուչները միջոցներ
օրինաւոր կերպով կատարել իրանց
պարտականութիւնը:

Այդ հարցին կարող ենք առանց
սխալվելու պատասխանել, որ մեր
թեմական տեսուչները ոչ կատա-
րում են օրինաւոր իրանց պաշ-
տօնը և ոչ էլ միջոց ունեն:

Չը խօսենք Թիֆլիսի թեմա-
կան տեսչի վրա: Նրա դրութիւնը
կարելի է փոքր ի շատե՛ լաւ
համարել. նրան միջոց է տուած,
փող է տուած: Նա կարող է
չըլել գիւղերը, ուսումնարաններ
հիմնել, եղածները կանոնաւորել

մեր Հայկական կանոնաւոր և վայելուչ գրու-
թեան օրինակներից քաղած կտորն երով կա-
րելի է ուսուցանել երեխային ձեռագիր տառ-
կարդալը միայն, բայց վարժել նոյն կտոր-
ն երով որ երեխայը ժամանակով ընտելանան
նոյն օրինակի պէս գրելու, մասնաւոր արագ
գրելու, բոլորովին անկարելի է:

Իսկ ինչ վերաբերում է այն օրինակներին,
որոնք դրած են այլբանարանի 3-դ. տպագրու-
թեան սկզբին, դժուար է անգամ հասկանալ
թէ ինչ նպատակով են նոյնպէս դրած, առանց
բաղադրիչ խաղերի, և դրագրել այլբանար-
անի, վերջին տպագրութեան օրինակները, ա-
ռաւել տեղեւ են, շատ անխաղախութեամբ չի-
նած և առաւել շատ անխաղախութեամբ չի-
նած և 4-դ. տպագրութեան օրինակները:

Վայելուչ գրութիւնը խաղաւարտ ուսուցանելու
համար պէտք է լաւ գիտենալ և ունենալ ընդու-
նակութիւն աշակերտներին հարողել այն բոլոր
կանոնները, որոնց նշոյլը անգամ չը կայալ: Տէր-
Ղևոնդեանցի այլբանարանում և որոնք մանրա-
մասնաբար ցոյց են տուած միմիայն զանոնաւոր
և վայելուչ գրութեան պատմութիւնը ու արհեստ-
ութիւնը՝ կոչված գրքի մէջ, իսկ գրելիս պէտք է
աշակերտին վարժել այնպէս և այն աստիճա-
նաւորութեամբ, որպէս մեկնած է յիշեալ գրքի
մէջ և հետեւել այն օրինակներին, որոնք ցոյց
են տուած լայնցիզմ տպած «Հայկական կա-
նոնաւոր և վայելուչ գրութեան օրինակների» մէջ,
առաջին տարիներում օգուտ քաղելով և զուստ
մեկնալով մի և նոյն օրինակները՝ տպածներէն:
Այս խոստովանեց Ս. Պետրեբուրգեան ձեռագր-
արանի Արեւելեան լեզուների ֆակուլտետը մա-
րաւականաւոր ենք այսքանով, առաջարկե-
լով կամեցողներին լաւ ուղադրութեամբ անու-
գել մեր ասածը և ցոյց տուածը:

Մ. Միանարանցի
Ս. Պետրեբուրգ, յունի, 78:

և այլն, իսկ միւսները նոյն զրու-
թեան մէջ են արդեօք:

Երևանի նահանգի թեմական
տեսուչը իր թեմի մէջ եղած ու-
սումնարանների երեսը տարինե-
րով չէ տեսնում:

Մի և նոյն ժամանակ տեսչին
անկարելի է մեղադրել իր անգոր-
ծունեութեան համար:

Հոգևոր իշխանութեան տես-
չին 150 ր. ճանապարհի ծախս է
նշանակած, իսկ նա այդ 150 ր.-ի
երեսը երբեք չէ տեսնում:

Տեսուչը պէտք է ձրի վարէ իր
պաշտօնը. բաւական չէ այս ղոն-
կիստութիւնը՝ նա ճանապարհի
ծախս էլ չէ ստանում: Ի՞նչ պէտք
է անէ, ի՞նչպէս պէտք է գործէ
այսպիսի մարդը: Միթէ նրա ձեռ-
քերը և ոտքերը կապած չեն և
վերջապէս միթէ խարբայութիւն
չէ ցոյց տալ, թէ տեսուչներ ու-
նենք:

Գլխավորը ամենքին հարկա-
ւոր է, բայց մանաւանդ նա հար-
կաւոր է մեր խեղճ, ամեն կող-
մից հարստահարված գիւղացուն:
Քանի որ մեր գիւղացիք տգէտ
կը լինեն, քանի որ նրանք ուսու-
մից զուրկ կը լինեն, մենք հայերս
կը մնանք անզարգացած և միշտ
անպատրաստ ազգ:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Յունվարի 30-ին.

Յունվարի 5-ին առաւօտեան ժամի 7-ին եր-
կաթնաւոր զինացիք բերեց զէպի մեղ Պլեյնայի
քաղ պաշտպան Օսման-փաշային իր սվիտայով:
Օսման-փաշան ինքը միջակ հասակի մարդ է,
միջուրով և անսքով կտրիճ՝ փոքր ինչ խիստ
և բարբարոս. խօսում է գաղղիերէն, անգղիերէն
և և փոքր ինչ ռուսերէն: Ինչպէս երևում է
ոտի վերջը ամենին արդեւ չէ լինում նրան
ազատ չըջնուլ առանց փայտի. Օսման-փաշան
իշխաւ այստեղ տեղիս գաղղիացուց մի հիւրանո-
ցում որ անուանվում է «Belle-Vue» (Օսման-
փաշի սվիտան բաղկացած է հետեւեալ անձինք-
ներից. թէֆիկ-փաշայ՝ շտաբի գլխավորը՝ շատ
աշխոյժ մարդ է, եւրոպական կրթութիւն ստա-
ցած, բաւականին լաւ խօսում է գաղղիերէն,
սաւաղական է Օսման-փաշի, խափոյ-բէյ՝ Օս-
մանի բժիշկը՝ արդէն փոքր ինչ ծերացած է,
նոյնպէս խօսում է գաղղիերէն: Սաղիկ-էֆէնդի
Օսմանի ատենադպիրն է իւշնի. սոքա երկուսն
էլ բաւականին ծերացած մարդիկ են: Սալիմ
նոյնպէս հասակն առած մարդ է և լղար: Նո-
ղէ-բէյ, իզէ-էֆէնդի և էրմէր-էֆէնդի՝ երեք
ազիւստաններն (ԱԶԵՍՏԱՆԵՆ) են Օսման-փաշայի
Առաջին երկուսը իւզբաշի (կապիտան) աստիճան
ունեն, իսկ վերջինը միւսկապիտան (պոզդորու-
չիկ)՝ Արաքս բոլոր երկուստարդ մարդիկ են
(այսինքն ազիւստաններն) և առողջ: Սրանցից
իզէ-էֆէնդին ամենին տաճիկ նմանութիւն
չունի.

Տեղիս բնակիչները այնքան ցանկանում էին
Օսման-փաշային տեսնել որ ամեն օր համա-
րեա գնում էին նրա իշխանը և դուռը բանալով
նայում էին և փակում էին. Օրուայ մէջ այնքան
անգամ բացվում էր դուռը և փակվում էր ան-
սպասելի հիւրից՝ որ Օսման-փաշան ստիպեցաւ
զինել ոստիկանութեան (պոլիցիային) որ ազատ

պահէ անթիւ այցելուներից. բայց ոստիկանու-
թիւնը մերժեց խնդրիցը ասելով թէ առանց
զրան ևս բաւական չափ դուռը ունենք. Ասում
են որ Օսման-փաշան նոյն իսկ Պլեյնայում
թնդանութեանց այնքան չէր անհանգիստ, որքան
այստեղ անհանգիստ հիւրերից: Վերջապէս Օսման-
փաշան տեսնելով ոստիկանութեան մերժելը,
ինքը կանգնեցրեց տաճիկ զինուորական գերի-
ններից իր զրան մօտ և հրամայեց ոչ մի անձա-
նօթ մարդու չը բանալ դուռը՝ առանց իմաց
անկող:

Օսման-փաշայի գալով տեղիս Գոգֆորուայի
ցիրկը առաւել ևս սկսեց ներկայացնել ռուս-
տաճկաց պատերազմի տեսարանները, ինչպէս
Ղարսի վեր առնելը, Օսման-փաշայի գերութիւնը
և այլն. Ամիս 22-ին ցիրկը ներկայացման ներ-
կայ էր Օսման-փաշան և այդ պատճառաւ բոլոր
տեղերն արդէն ժամի 6-ին, նոյն ներկայացման
սկզբիցն ընկած էին և բազմութիւնը կրկնապա-
տիկ գնով անգամ տեղ չէր կարողանում գտնել:
Ամսոյ 25-ին տեղիս թատրոնը դնաց, որտեղ
բնիստօրը մօտ բերեց փառաւոր գիրք ստո-
բազրվելով՝ որի մէջ ստորագրվում են առհա-
հասարակ երեւի և պատուաւոր այցելու մար-
դիկը: Օսմանը ստորագրեց այսպէս «Marechal
ghazi Osman. 25 janvier 1878»։ Իսրաիկ նոյն
գիշերը թատրոնը լի էր բազմութեամբ:

Այստեղ մէկ հիւրանոց կայ որ անուանում են
«Астраханская гостиница»։ այս հիւրանոցի
տէրը կամենալով օգուտ քաղել Օսման-փաշայի
ներկայութեանը՝ տարածեց քաղաքում որ մի
երեկոյ Օսմանը պէտք է գալ այն հիւրանոցը.
Լսելով ժողովուրդը, ամեն երեկոյ համարեա առա-
ջուց վաղում էր լաւ տեղ բռնելով՝ որ Օսմանին
լաւ տեսնեն և ի հարկէ տեղ բռնելով հիւրանո-
ցում պէտք է պահանջէին խմիչքներ, թէյ և այլ
ուրիշ ծախսեր անէին. հիւրանոցի տէրը այս տե-
սակ լուր տարածելուց յիշաւ բաւականին օգուտ
քաղեց՝ պատճառ որ այնքան բազմութիւն էր
ժողովվում, որ հիւրանոցի սանդուղքի վրա ան-
գամ անցնել անկարելի էր թէյ և Օսմանը չար-
ժանացրեց իր ներկայութեամբ վերադիտել հիւ-
րանոցը:

Պատմում են որ Ս. Պետերբուրգից եկաւ խար-
կով լուսանկար պ. Էլիսովը, միայն Օսման-փաշայի
և նրա սվիտայի պատկերը հանելու նպատա-
կաւ որովհետեւ մինչև այժմ եղած պատկերները
ոչ մէկը օրինաւոր կերպով չէ հանած և նմանու-
թիւն չունի: Օսմանը առաջ չէր համաձայնում
նրա խնդրիքին, բայց վերջը շատ խօսելուց յե-
տոյ կարողացել է համոզել: Բացի նորանից տե-
ղիս լուսանկար Բիլլը և հանեց Օսմանի պատ-
կերը, որ և բաւական նման է:

Ս. Պետերբուրգի լրագրիները հաղորդում են
որ Օսման-փաշային դատաւարանական քննու-
թեան տակ պէտք է ենթարկեն՝ պատճառը որ
Պլեյնայի պաշարման ժամանակ ռուսաց զօրքից
չառերը գերի ընկան, բայց Պլեյնայի վեր առած
ժամանակ ոչ մի ռուս գերի կենդանի չը
գտան: Այժմ երբ գետին մէջ թաղած թնդանութ-
նիւն էին որոնում՝ գտան մօտ 150 ռուս գի-
նուորականների դիակները՝ և ասում են, որ սրանք
բոլորը Օսման-փաշայի հրամանով կենդանի թաղ-
ված են կանգնած, մինը միւսին կից:

Նոյն փաշայի մասնաւոր կեանքից պատմում
են լրագրիները որ ունի երեք որդի և երկու աղ-
ջիկ: Մեծ երկու որդիքը՝ որոնց տուած է եւրօ-
պական կրթութիւն, գլխավորապէս ծառայու-
թեան մէջ են: Փոքր որդին Լօնդօնում է և
պատրաստվում է արուեստագէտ արտիլերիստ
դասնալու: Երկու աղջիկները Օսմանի՝ կրթ-
ված են ֆրանսիական գուլբերնատի վերահս-
կողութեամբ, մեծը Պէշտում ունի ռուսական
չորերի ձեւեր և կարելու, իսկ փոքրը Օսմանի
համաձայնութեամբ բնակվում է Փարիզում՝ սի-
րահարված լինելով մի գեղականութեան մէջ գի-
նուորական ծառայողի վրա: Այժմ թողել է այն
ծառայողին և երգում է Էլյուբի մականունով
Փարիզը՝ Էլյուբաթօյում: Օգոստոսի 15-ականա-
մարտներից յետոյ՝ Օսմանը ստացաւ շնորհա-
րական հեռագիրներ իր երկու աղջիկներից
(Պէշտում և Փարիզից): Այս շնորհաւորութիւնը
այնքան չարժեք նրա միտքը որ կարեն երկու
հեռագիրներն ևս իր կուռքի վրա: Օսմանն չէ
հետեւում ամենին Մահմէտի օրէնքներին, նա
արձակ համարձակ գործ է ածում գինին. երբեք
և ոչ մի տեղ իրան չի գրկի մի յիշ լաֆիտից:

Ասում են որ Վիշնիւկ քաղաքում յանձնեցին
Օսմանին 1000 տաճկաց լիւրա, որ սուլթանն էր
ուղարկել:

Նրան առաջարկեցին այդ գումարը ընդունել
ոչ թէ տաճկաց լիւրայով՝ այլ ուրիշ դրամով, բայց
Օսմանը չը համաձայնեց:

Տեղիս լրագրիներից մէկը հաղորդում է թէ մի
քանի մարդիկ կամենում են կազմել որ և իցէ
մի հասարակական ժողով՝ յօդուտ այն զինու-
թականների այրիացած ընտանիքների, որոնք
զօրադուրբն ունեցան գերի ընկնել Օսմանի
մօտ Պլեյնայի ճակատամարտներում: Հետագը-
քիւր է գիտենալ թէ կը ցանկանայ արդեօք Օս-
ման-փաշան այցելութիւն անել այս ժողովը:

Օսման-փաշայի գերի ընկնելը և Պլեյնայի
վեր առնելը այնքան մեծ ուրախութիւն պատ-
ճառեց ամեն տեղ՝ որ անկարգութիւններ անգամ
ծնեցրեց և շատ տեղ հաշտարար դատաւորների
գործերն ևս աւելացրեց:

Ս. Միլլիթմանց

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Լէնկօրան յունվ. 14

Ամսոյ 8-ին կիրակի օրը տեղույս հայ բնակիչ-
ներից մէկը, Բոլորան Անդրէյէ՛՛՛ Տէր-Ստեփանովը
իր հանգուցեալ եղբոր Նմիլան Անդրէյէ՛՛՛ հա-
մար հոգեհանգիստ կատարելով, ըստ տեղական
սովորութեան սեղան էր պատրաստել և հրաւի-
րել հասարակութեան պատուաւոր անդամներին,
որոնց թուով կային ռուս և թուրք աստիճանա-
ւորներ: Ճաշի ժամանակ այնպիսի մտեղմութիւն
և համակրութիւն էր նկատվում այս երեք ազգա-
բնակութեան ներկայ գտնվող անդամների մէջ
որ այս հանգամանքը առիթ տուաւ տեղույս հաշ-
տարար միջնորդ Գլխորի Ալեքսանդրովիչ Կա-
կովիչին կենաց առաջարկել այս միաբանու-
թեան յարատեւութեան համար՝ մի համառօտ
և ազգու ճառով բացատրելով որպէս չափաւոր
հետեւեց: Յետոյ առաջարկութիւն եղաւ հան-
գուցելոյ յիշատակը յարգելու համար նուիրա-
վութիւն ժողովել հանդիսականներից յօդուտ
թիւրքիսպանական հայ զաղթականների: Այս
անթիւ ներկայ գտնվող ռուսներից պարոն Տի-
դէնգաուզէնը, որ լաւ ծանօթ է եղած հան-
գուցելոյ հետ և տեղեակի նրա անձնական յառ-
կութիւններին, մի համառօտ ճառ խօսելուց յե-
տոյ, ինքն սկսեց նուիրատվութիւններ ժողովել
հանդիսականներից, Գոյացաւ ընդամենը քա-
ռասուռն և մի ռուբլ: Այս գումարը նուիրա-
տուաց համաձայնութեամբ յանձնվեցաւ ինձ,
իբրեւ տեղական հասարակութեան ներկայացուց-
չի, որ ևս հասցնեմ գումարը ըստ պատկանե-
լոյն:

Կատարելով այս քաղցր պարտաւորութիւնը և
ուղարկելով ձեզ, պարոն խմբագիր, յիշեալ 41 ր.
ընով խնդրեմ հասցնէք այդ գումարը թիֆլիսի
մասնաժողովին և այս մասին հրատարակէք ձեր
պատուական լրագրի միջոցաւ ի տեղեկութիւն
նուիրատուաց:

Պաշտօնակատար գաւառապետի Պետրոս Տէր-
Մարկոսեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«ГОЛОСЪ» լրագրի թղթակիցը գրում է Ղարսից
յունվարի 16-ին: Հարուստ Հայաստանը մի քանի
դար գտնվելով թիւրքերի իշխանութեան տակ,
որը արգելք էր դնում նրա ազատ զարգաց-
ման, նորից կը հասնի իր ծաղկեալ դրութեան:
Այստեղի հայերը չը նայելով իրանց տգիտու-
թեան, շատ ընդունակ են, նրանք հարստութիւն
ձեռք բերելու մեծ հակումն ունեն, ինչպէս ըս-
տը նրանց աղբակիցները, որոնք ցրված են ամ-
բողջ երկրագնդին վրա և այդ շնորհալի պակա-
սութիւնը ստիպում է նրանց այս դէպքում ան-
գործ չը մնալ, այլ աշխատել: Թիւրքաց կառավա-
րութեան ժամանակ, նրանք ոչինչ չէին կարո-
ղանում անել, որովհետեւ ինքն թիւրքաց կառա-
վարութիւնը նրանց կողպատում էր և այդպիսով
նրանց միջոց չէր տալի հարստանալու: Այդ-
պիսի պայմաններին տակ գտնվելով հայերը չէին
կարողանում օրինաւոր կերպով աշխատել, այլ
մտածում էին միայն մի կտոր հաց ձարելու վրա:
Եւ նրանք իրաւունք ունէին այդպէս վարվելու:
Մարդ աշխատում է նրա համար, որ ապրէ և իր
ձեռք բերած աւելորդ աշխատանքով ապահովաց-
նէ իր ապագայ գոյութիւնը, բայց այս թշուառ-
ները ոչ թէ իրանց կարողութեան այլ և իրանց
կենսի պատահով չունենալով, չէին կարող
այդպէս մտածել: Հայերի կենսը ամեն րօպէ մի
որ և իցէ «ուղղափառ» կամեցին էր կախված

* Այս տեղի հայերն սովորութիւն ունեն ռու-
սաց եղանակով անուանակոչվել: Դասնորդ և Ես
նոյնութեամբ գրեցի այս անունները:

և հայերից շատ քիչ մարդ կը գտնվի որ առանց
ընտարարութեան ենթարկվելու հասած լինի
ծերութեան հասակին:

«С. П. Вѣд.» լրագիրը հաղորդում է որ կար-
գադրութիւն է արած բոլոր պաշարէղենները մեր
հարաւային զօրքի համար ուղարկել Ողէսա, որտե-
ղից ծովով կուղարկվի Թիւրքիա: Այս բանի հա-
մար հրամայած է պատրաստել ռուսաց բնիկ-
ութեան և վաճառականութեան ընկերութեան
չոգենաւերը:

«ГОЛОСЪ» լրագիրը հաղորդում է որ ստասիս-
տիկական տեղեկութիւններից երևում է, որ յուն-
վարի 1-ից սկսած մինչև յունվարի 15-ը Ս. Պե-
տերբուրգում տարածված տիֆ հիւանդութիւնը
խիւս շատ զահէր: Այդ ժամանակամիջոցում
մեռան 686 մարդ (407 մարդ և 279 կին), այն
ինչ նախկին ժամանակներում այդ թիւը հազիւ
հասնում էր 400: Բոլոր 152 վախճանածների
թիւը համարեա (25%) տիֆի և դրա նման հիւան-
դութիւնների զոհեր էին: Դժպիւղը նոյնպէս տա-
րաւ մի քանի զոհեր:

«Русский Миръ» լրագիրը հաղորդում է որ
ներքին գործերի մինիստրի առաջարկութեամբ
կազմակերպվեց առանձին մասնաժողով թիւր-
քաց գերիներից բերած տարափոխիկ հիւանդու-
թիւնների տարածման առաջն առնելու համար:

ՕԴԵՍՍԱՅԻՑ հեռագրում են ռուսաց լրագիր-
ներին, որ այնտեղի Գուման ընդունած չը լինե-
լով ուղարկվայի առաջարկված քաղաքային
յայտնի ծախսեր, ուղարկվայի բոլոր անդամները
հրաժարական տուին: Գուման խնդրեց նրանց
յետ առնել իրանց հրաժարականը: Անդամներից
երեքը համաձայնվեցան մնալ իսկ միայն օր.
Բուխտեմէլ թղթեց իր պաշտօնը:

«Донская Пчела» լրագրին գրում են Թիֆլի-
սից որ Ռուսաստանի նոր նուաճած Հայաստա-
նի երկրներին համար շուտով նշանակվում են
պաշտօնեաներ: Լրագիրը լսել է որ Հայաս-
տանի զինուորական նահանգապետը նշանակ-
վում է գեներալ Լօրիս-Մէլիքով:

Փետրվարի 9-ին Թիֆլիսի կաթօվիկ եկեղե-
ցում կատարվեցաւ մեր քաղաքի խաղական կօն-
սուլի կարգադրութեամբ և հրավերով Վիկտոր-
Էմանուէլ թագաւորի յիշատակի համար հոգե-
հանգիստ:

«Сѣверн. Вѣстн.» լրագրի № 27-ի մէջ նո-
րերումս տպվեցաւ զծի տակ մի շատ հետաքը-
քիւր յօդուած հայերի վրա, որպէս պատասխան
պ. Վէնիկովի հայերի դէմ յարձակմունքներին:
Այդ յօդուածը ստորագրված է «Армянинъ»
հայ անունով:

Մեզ խնդրում են յայտնել, որ ԱՍՏԱՐԱԿԱ-
ՆՈՒՄ բնակվող տեղացիք և օտարականներ
նուրիկ են Դարբէթի հայոց ընկերարանին 210
րուբլ: Ընկերարանի վարչութիւնը յայտնում է
շնորհակալութիւն նուիրատու պարոններին:

ՍԱՆԱՀԻՆ գիւղից մեղ գրում են, որ նոյն
վանքի միաբան Գեղամ վարդապետը արդէն
երկու տարի հայոց եկեղեցական ձայնագրու-
թեան դասեր է տալիս և շատ հետաքրքեամբ է
ուսուցանում: Շրջակայ գիւղերի աղիւղները
կարող են Սանահում դասեր առնել:

Նուրուց. «ГОЛОСЪ» լրագրին գրում են որ
չերամի կոկոնների գինը յանկարծ բարձրացաւ
22 րուբլուց մինչև 30 րուբլ և մինչև անգամ 42
րուբլ և աւելի թաղք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Անգլիական ժողովուրդը հրապարակային
գումարումներ անելով մեղադրում է և կամ
պաշտպանում է կառավարութեան դրութիւ-
նը Թիւրքիայի գործերի վերաբերութեամբ
Լօնդօնում, Մանչեստրում, Լիմինգտօնում,
Սուրիտօնում և Գուելլեֆօրտում գումարված
հրապարակային ժողովները կարենաւի բա-
ղաբանութիւնը են պաշտպանում, իսկ

Գլխավոր, Իսպուռեւ և ուրիշ տեղեր, նոյնպէս և Մանչեստրում գումարված մի ժողով ասու- տիկ կերպով մեղադրում են կաթինէտին: Այս վերջին երեք քաղաքներում հաւաքված ժո- ղովուրդը այն աստիճանի նեղացած է եղել կաթինէտի դէմ որ մեծ աղմուկներ և ձայններ բարձրացրել են: Մանչեստրում պոլիցիան ստիպվել է միջամտել կաթինէտի հակառակ եղող ազատական կուսակցութեան ժողովին որ խաղաղութիւնը վերահաստատվել այնտեղ:

Օքսֆորդում գումարված հրապարակային ժողովն ներկայ է եղել Դարգսոն, ազատա- կան կուսակցութեան գլխավորներէն մին և Անգլիայի նախկին մինիստրը: Դարգսոնը այդ ժողովում ասել է թէ անգլիական նաւա- տորութիւնը ուղարկելը, իր կարծիքով, կարելի է համարել պատերազմական մի գործ. և այդ ընդդէմ է Անգլիայի չեզոք դրու- թեան որը պարտաւոր է պահել անգլիական կառավարութիւնը իր արած խոստումների համեմատ: Նա յայտնեց թէ վախենում է որ համայնքների խորհրդարանը կը տայ Ֆինան- սների քարտուղարին խնդրած վեց միլիոնի կրեդիտը և ասաւ թէ ժողովուրդը միայն կարող է դեռ իր բողոքներով չը թող տալ պարլամենտին որ եւրոպական խաղաղութեանը վտանգ սպառնող մի ճանապարհի մէջ չը մտնի: Եթէ խորհրդարանը որոշէ 6 միլիոնի կրեդիտ անել մինիստրութեան, ծովային և զինուորական զորութիւնները աւելցնելու համար, Սուլթանը այդ անսնելով կը քաջա- լերվել պատերազմը շարունակելու: Եթէ Անգ- լիական կառավարութիւնը կարծում էր թէ հարկաւոր է որ ազգը պաշտպանէ իրան և վտանգ լինի իր վրա, պարտաւոր էր խնդրել այդ պաշտպանութիւնը բացարձակ կերպով երկու խորհրդարաններից և ոչ թէ 6 միլիոնի կրեդիտ խնդրելով, որովհետեւ այդ խնդիրը կը ներկայացվել միայն համայնքների խորհր- դարանին: Պարլամենտի երկու խորհրդարան- ների վստահութեան քուէն միայն կարող է տալ Անգլիայի ներկայացուցիչներին այն ազդե- ցութիւնը որը հարկաւոր է նրանց ունենալ եւրոպական շահին վերաբերող հարցեր որոշ- ված ժամանակ երբ մի կոնֆերենցիա կը լինի: Շատերը նրա համար միայն պատրաստ- վում են 6 միլիոնի կրեդիտը տալ որովհետեւ վախենում են թէ լըրդ Բիկնսթիլը պաշտո- նից վաղ կընկնի և ցանկանում են ազատել նրան, երևակայելով որ եթէ կաթինէտը կորցնէ այդ մինիստրին, Անգլիան երբորդ աստիճանի տէրութիւնները կարգը կընդնի:

Բացի այս հրապարակային ժողովներից (մի- տինգ), հեռագիրը յայտնում է որ 900-ից աւելի ամենայայտնի վաճառականներից և նշանաւոր անձերից ստորագրված յիշատակագիրներ յան- ձնվել են Ֆինանսների քարտուղարին: Յիշա- տակագիրները վստահութիւն են յայտնում կառավարութեան քաղաքականութեանը վրա:

ԱՌՍՏՐԻԱ

Արեւելեան հարցի լուծման համար կոն- գրէսի գումարումը որը առաջարկել էր աւ- ստրիական տէրութիւնը, ընդունված է ամեն տէրութիւններից:

Աւստրիան սահմանակից լինելով ապստամբ- բված օսմանեան նահանգներին, նա ամեն տէրութիւններից աւելի շահ ունի արեւելեան հարցի մէջ: Բալկանեան թերակղզում լինելու քաղաքական փոփոխութիւնները ի հարկէ ա- մենից աւելի Աւստրիայի շահերի հետ կապ ունեն:

Բոլգարիայի ինքնավարութիւնը, մի անորոշ բառ է. և դեռ բոլորովին չէ յայտ- նված թէ որոնք կը լինեն Բոլգարիայի նու- րածին իշխանութեան սահմանները, որ ազգից իշխան պիտի հրաւիրվի Բոլգարիայի իշխանա- կան աթոռի վրա: Այս ամենը աւելի հետա- քրքրում է Աւստրիային որ շտապէ կոն- գրէսի առաջարկութեան խնդիրաբանն ունե-

նալ: Ի հարկէ Աւստրիան արդէն վաղուց հա- մաձայնված կը լինէ այս հարցերի զիտաւոր կէտերի վրա. ուստի որչափ էլ Աւստրիան մեծ շահեր ունենայ արեւելեան հարցի կար- գադրութիւնները մէջ, մենք չենք կարող շու- տով հաւատալ այն լուրերին որոնք դեռ մի քանի օր առաջ Ռուսաստանի և Աւստրիայի մէջ անհամաձայնութիւն էին ցոյց տալի և դրանից ծանր հետեւանքներ էին գուշակում: Պատերազմի ժամանակ մինչև անգամ փոքր բաները շատ մեծ են երևում և մարդիկ սի- րում են ամեն բան չափազանց երկրաչափ ցոյց տալ: Այսպէս Աւստրիական տէրութիւնից առ- սական կաթինէտին ուղարկված մի ծանուցա- գիրը իբրեւ վերջնագիր (իւլտիմատում) էին համարել և այնպէս հեռագրել էին «Gazette de Bologne» լրագրին:

Դունայ գետը չեզոքացնելու և այն տեղ նաւարկութիւնը ամեն տէրութիւններին ա- զատ թողնելու հարցը որը երեւի թէ պա- հանջում է այժմ Աւստրիան, արդէն մի տա- րուց աւելի է որ մեծ պետութիւնների մէջ բանակցութիւնների առարկայ էր եղել և Ռուսաստան էլ սկզբունքով ընդունած էր այդ չեզոքացումը: Ուրեմն Աւստրիայի և Ռուսաս- տանի մէջ արդէն մշակված է այդ հարցը և հաւանական է որ նրա որոշումը մեծ և վտանգաւոր դժուարութիւնների չի պատահի: Աւստրիական կաթինէտը որ մաքսային տուր- քերի հարցի պատճառով հրաժարական էր տուել, նորից հաստատվեցաւ իր պաշտոնի մէջ, պարլամենտի մեծամասնութիւնը հա- մաձայնվելով իր հետ:

Ունգարիայի առաջին մինիստրը պ. Տիսա որ գտնվում է այժմ Վիեննայում, վստա- հացել է որ ինք կը կարողանայ զրաֆ Սուեբրապերդի մինիստրութեան առաջարկու- թիւնները ընդունել տալ Ունգարիայի Դիէ- տին: Այդ վստահութեամբ պարլամենտի մեծամասնութիւնը համաձայնվել է մինիստ- րութեան առաջարկած մաքսային տուրքի գներին:

Բայց միթէ Սուեբրապերդի մինիստրութեան իր պաշտոնի մէջ նորից հաստատվելուց յե- տոյ, Աւստրիայի և Ունգարիայի մէջ եղած անհամաձայնութիւնը մաքսային տուրքի հա- մար, չի՞ շարունակվի, այդ չէ կարելի շու- տով վճռել. որովհետեւ որչափ էլ առաջին մինիստրը պ. Տիսա վստահութիւն տված լինի զրա համար, Դիէտի մէջ պ. Տիսայի հակառակորդ մի զորաւոր կուսակցութիւն էլ կայ, կազմված նախկին պաշտօնականներից:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստանի նորընտիր կաթինէտը կազմ- ված է ամբողջապէս մի և նոյն կուսակցու- թեանից. հետեւապէս նրա անդամները աւելի ուզում են գործել քան թէ վիճել:

Կաթինէտի նախագահը պ. Կոմենդուրոս իր քաղաքական պրոգրաման պարլամենտին ներ- կայացրած ժամանակ ասել է.

«Մի պրոգրամա կարելի է ամփոփել այս մի քանի բառերով. ազուր կերպով պաշտ- պանութիւն հեղինականութեան և վեր հա- րստահարված եղբայրների:

«Նա բովանդակում է թերեւս աւելի գործ քան թէ խօսք»:

Հեղինական ազգի զգացումները համաձայն են այդ պրոգրամային. ուրեմն նորընտիր կա- թինէտը վստահ է որ իրան չի հակառակի ոչ պարլամենտը, ոչ լրագրութիւնը և ոչ ժողովրդի կարծիքը. ընդհակառակ որոնք կօգնեն իրան և կը կատարեն իր խնդրած ամեն զոհողութիւնները:

Հեղինական ամբողջ ժողովուրդը համոզ- ված է թէ Յունաստանի պարտաւորութիւնն է Թիւրքիայի ճնշող լծից ազատել յոյների բնակած նահանգները և այդ զգացումը այն աստիճան խոր արմատ է գցել նրա սրտի մէջ որ իր ազգային ցանկութիւնները իրա-

զործելու դեմ եղած մի ամենափոքր արգելքն անգամ դաւաճանութիւն և մասնութիւն է համարում:

Ժողովրդի այդ խոր զգացումին արձագանք է տալի նաև պարլամենտը և զրա ապացոյցը այն է որ երբ պ. Կոմենդուրոսը խօսել է պարլամենտում վերեւ յիշված խօսքերը, ամեն կողմից սաստիկ ծափահարութիւններ և կեց- ցէի աղաղակներ լսվել են երկար ժամա- նակ:

Յունալի է ուրեմն որ Կենդ թագաւորի կառավարութիւնը պարլամենտի և ժողովրդի վստահութիւնով և միութիւնով զորացած կաջողվել իր սկսած գործի մէջ և այս պա- տերազմից իր սպասած յոյսերը կարդիւնա- տրովեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագրին Աթէնքից հեռագրում են, փետրվարի 6-ին, որ համարեա բոլոր մեծ պե- տութիւնները խորհուրդ են տալի Յունաստանի կառավարութեան հեռացնել իր զօրքերը Թէսա- լիայից, խոստանալով որ կը գործածեն բոլոր իրանց ազդեցութիւնը, Թիւրքաց իշխանութեան տակ գտնվող բոլոր յունական գաւառներում կարգ պահպանելու համար և նոյնպէս խոստա- նում են որ այս գաւառների ապագայ վիճակի մասին արդարացի կարգադրութիւններ կանեն եւրոպական կոնֆերենցիայում: Յունաստանի կառավարութիւնը լսելով դրանց, կամենում է իբր դադարեցնել զինուորական զործողութիւն- ները: Բայց Թէսալիայից բոլոր զօրքերի հեռա- ցնելու հարցը կրկին թողնվում է կոնֆերենցիայի վճռին: Իր կողմից յունաց կառավարութիւնը պահանջում է որ Թիւրքերը նոյնպէս դադարեց- նեն թշնամական գործողութիւնները Կրիտեան ապստամբների դէմ:

Հռոմից հեռագրում են Բերլինի լրագիրներին յունվարի 8-ին. «Այսօր առաւօտեան տար ժա- մին կարդինալների ժողով կայացաւ, որտեղ կար- դացվեցան պապի կարգադրութիւնները կարդի- նալների ժողովի և իր թաղման վերաբերու- թեամբ: Բլիւի, Պէկկի և դի-Պիէտրո կարդինալ- ներին յանձնված է եկեղեցու կառավարութիւնը ժամանակաւորապէս»: Հռոմի մէջ հանգստու- թիւն է տիրապետում. Բոլոր հռոմէական եկե- ղեցիների մէջ կը կատարվի պապի հոգեհան- գիստը. ամենափառաւոր հոգեհանգիստ կը կա- տարվի ս. Պետրոսի եկեղեցում մէջ: Մի և նոյն թիւից հաղորդում են որ կարդինալների ժողովը իր նիստերը կուսենայ Վատիկանի երրորդ յար- կում, աշխարհագրական քարտէզների գաղերէ- յում: Ընտրութիւնները, երեւի կը սկսվեն Կոնստա- տնուլայի դահլիճում. Պապը կարգադրութիւններ թողնց, որ այսօր պէտք է կարգան կարդինալ- ները: Սրբազան Կիլի, կարդինալների ժողովի մարշալը այսօր սկսեց կատարել իր պարտաւո- րութիւնները: Ֆրանսիայի կարդինալները վաղը կը հասնեն Հռոմ: Աւստրիական և սպանական կարդինալներին սպասում են կիրակի 10-ին կամ երկուշաբթի փետրվարի 11-ին: Ինչպէս հաղոր- դում է կարդինալ յաջորդը, պապի թագման հանդէսը կը կատարվի ս. Պետրոսի եկեղեցում:

«Norddeutsche Zeitung» կարծում է որ սուլ- թանը այն պատճառով չէ բարձրացնում մարգա- ռէի դրօշակը, որ նա արդէն վաղուց է որ ան- հետացած է Կ. Պոլսից: Մի խաւացի մեծ փող տալով պալատական պաշտօնականներին քանի մի տարի է որ գողացել է այդ դրօշակը և այժմ նա գտնվում է Տուրինի մուգեռում: մէջ: Այդ սրբապետութեան համար է որ մահմետականների կարծիքով այժմ Աստուած պատժում է Թիւր- քիային:

«Times» ասում է որ սուլթանը դիտաւորու- թիւն ունի փախչել Կ. Պոլսից: Ամենաւաւ դրա- հաւոր նաւ միշտ գիշեր և ցերեկ կանգնած է պալատի առջև: Սուլթանը ոչ թէ ուռմաներից է փախչում, բայց կատաղի մահմետական ամբո- լից: Տէրութիւնը այժմ չունի ողորդ բաշխուողե- կների զազանութիւնները և աւաղակութիւնները: Նա չէ կարող մինչև անգամ արգելել նրանց հրապարակով ծախել մայրաքաղաքի փողոցների վրա պատերազմի ժամանակ կողպտված իրե- ղէնները: Փորձում էին տեղափոխել բաշխու- ողութիւնը Ասիա (խեղճ Հայաստան), բայց այդ էլ չէ աջողվում և դադարակցութիւնը շատ դանդաղ է գնում:

«Times» լրագրին հեռագրում են Կորֆից փետրվարի 5-ին, որ Թիւրքաց մեկ զննապետ 20 զինուորներով սահմանը անցաւ և գերի ընկավ յոյների ձեռք: Թիւրքաց զօրքի մէջ բոլորովին անկարգութիւն է տիրապետում:

Կէօնի լրագիրը հաղորդում է փետրվարի 11-ին (յունվարի 30-ին) որ Գերմանիայի և Աւստ- րիայի յարաբերութիւնները փոխվեցան, և ինչ- պէս հաւատացնում են թշնամական են: Վիլ- հելմ կայսրը նուրից Կ. Պոլսի թշուառների համար 10,000 ֆրանկ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Բեռլին, 7/19 փետրվարի: Իշխան Բիս- մարկ պատասխանելով Լայխտադի մէջ արեւե- լեան խնդրի վերաբերութեամբ արած հարց- մունքին, մի առ մի բացատրեց խաղաղու- թեան սկզբնական պայմանները, ապացուցա- նելով որ Գերմանիայի շահերը այդ պայման- ներով չեն վնասվում այնքան, որ Գերմանիա- յին հարկաւոր լինէր գուրա գալ իր այժմեան բռնած դիրքից: Դարգանքեան նեղուցի մա- սին կրած երկիւղը ստվում է գործերի իրա- կան դրութեամբ: Թէ ինչ պաշտօնական դիրք կընդունէ Գերմանան, այդ մասին Բիսմարկ չէ կարող պաշտօնական բացատրութիւններ տալ, որովհետեւ միայն այսօր կը ստացվեն դրան վերաբերեալ դոկումենտները: Բիսմարկ չէ հաւատում եւրոպական պատերազմի հնա- րաւորութեանը, որովհետեւ այդ դէպքում այն պետութիւնները որոնք Ռուսաստանի դէմ կը գործէին, պէտք է ստիպված լինէին յանձն առ- նել Թիւրքիայի ժառանգութեան մասին պատասխանատուութիւնը: Գերմանիան կամե- նում է որ կոնֆերենցիան շուտով գումարվի, որ երեւի, կը կայանայ մարտ ամսի առաջին կեսում: Բիսմարկ կարական կերպով մերժում է բոլոր պահանջներ Գերմանիայի արեւելեան խնդրին միջամտելու մասին: Գերմանիան, ասում է նա, յօժար է անդիւր կերպով կա- տարել միջնորդող դերը, բայց հրաժարւում է եւրոպայի միջնորդ գաւառների դերը կա- տարելուց:

Վիեննա, 8/20 փետրվարի: Վիեննայից հեռագրում են «Толос» լրագրին Այստեղի պաշտօնական շըմաններում ուրախութիւն են յայտնում Բիսմարկի ձառի պատճառով: Կար- ծում են որ այդ ձառը կը թելթաւանի Ռու- սաստանի և Թիւրքիայի մէջ խաղաղական բանակցութեան ընթացքը: Կոնգրէսի պրո- գրամայի վերաբերութեամբ գործի մէջ օգուտներ ունեցող կողմերը այժմ գիտեն թէ ինչ պէտք է սպասեն Գերմանիայից: Մանա- ւանդ գոհ են Բիսմարկի ձառից՝ այն պատճա- րով, որ նրա տուած բացատրութիւնները անհնարին են անում Աւստրիայի և Գերմա- նիայի մէջ թշնամական յարաբերութիւնները, եթէ պատահելու լինի պատերազմ Աւստրիայի և Ռուսաստանի մէջ: Այդ իրողութեան վրա մասնացոյց է անում «Tremdenblatt» լրագիրը: Նոյնպէս «Presse» և «Neue Freie Presse» լրագիրները Բիսմարկի ձառը բարեհաճոյ են համարում Աւստրիայի համար, այն ինչ «Tagblatt» և «Deutsche Zeitung» լրագիր- ները ընդհակառակն Ռուսաստանին նպաստա- ւոր են համարում այդ ձառը: Բոլոր լրա- գիրները մեծ նշանակութիւն են տալիս նոյն- պէս Բէրլինից ձառին և յիշեցնում են որ Բիսմարկի և Բէրլինից մէջ մեծ մակրու- թիւն կայ:

Հռոմ, 8/20 փետրվարի: Կարդինալ Պէկ- կի ընտրված է պապ և արդէն բազմեց պա- պական զաշի վրա Լեոն VIII-ի անունով: Կ. Պոլիս, 8/20 փետրվարի: Երգուողից և Բաթումից Թիւրքաց զօրքերի դուրս գալը գանդաղ կերպով է գնում: Սուլթանն փա- շտե կանչված է Կ Պոլսի որտեղ կենթադկվի զինուորական գաւառատանին:

